

ԱՆՑԵԱԼՔ

I

ԳԵՈՐԳ ԽԱՏԻՍԵԱՆ

Լրագիրները հաղորդեցին, որ Մոսկւայից Կովկաս անցնելիս, Խարկովում, երկաթուղային մի անհեթեթ արկածի զոհ է զնացել ժամանակակից հայ մտաւորականութեան երեւելի ներկայացուցիչներէից մէկը՝ Գեորգ Խատիսեանը։ Արտասահմանում նրա անունը քիչերին է յայտնի։ Կովկասում էլ ժողովրդական լայն հռչակ չէր վայելում նա, բայց հանրային - մտաւորական շրջաններում ծանօթ, ազդեցիկ եւ ընդհանուր յարգանք վայելող դէմք էր։

Գ. Խատիսեանը ծնւել էր Թիֆլիսում, 1879 թ. Օգոստ. 31-ին։ Զաւակն էր պետական պաշտօնեայ Յովհ. Խատիսեանի ու ծանօթ գրագիրուհի Մ. Մարիսեանի, եւ իր միւս երեք եղբայրների պէս - Կոստանտին, Աղեքսանդր, Լեւոն - դաստիարակւել էր մտաւորական միջավայրում՝ ընտանիքից սկսած մինչեւ համալսարան։ Իր տարրական կրթութիւնը ստացել էր Տիկ. Ս. Արղուիթեան - Երկայնարագուկի յայտնի դպրոցում։ 1896 թ. առաջնակարգ մրցանակով՝ ոսկի մէդալով աւարտելով Թիֆլիսի Յրդ. Գիմնազիան՝ նոյն տարին մտել էր Մոսկւայի Պետրովսկո - Ռազումովսկայա գիւղատնտեսական ճեմարանը, որտեղից դուրս էին եկել Դաշնակցութեան հիմնադիրները։ Սակայն, մի տարուց, գիւղատնտեսութիւնը յարմար չգտնելով իր հակումներին, փոխադրւել էր Մոսկւայի համալսարանի իրաւաբանական բաժինը։

Ինչպէս ընտանիքի մէջ ու գիմնազիայում, Գեորգը, կամ ինչպէս սովորաբար անւանում էին նրան, Գիգան համեստ, սակաւախօս, ամբողջապէս գրքի ու գրչի նւիրւած յամառ կարդացող էր։ Ոչ յօրինակ իր աւագ եղբայրների, նա խորշում էր իր անձի շուրջը աղմուկ հանելուց։ Մտաւոր աշխատանքներով չափից աւելի ծանրաբեռնւելու հետեւանքով, նա 1899թ. հիւանդացու թոքախտով եւ ստիպւած եղաւ անցնել Գերմանիա, ուր մի տարի մնաց բուժարաններից մէկում, Հոենհոսի եզերքին։ 1900 թ. ապաքինւած վերադարձաւ Մոսկւայ, աւարտեց համալսարանի իրաւաբանական բաժինը եւ իր ծննդավայր Թիֆլիսում նւիրեց փաստաբանութեան, ստանձնելով գլխաւորապէս հանրային - քաղաքական բնոյթ կրող գործեր։

Նոյն ժամանակներից սկսւում է Գիւղայի հասարակական գործունէութիւնը: Շնորհիւ իր բազմակողմանի ու խորունկ զարգացման, աղնիւ եւ ուղղամիտ նկարագրի եւ գիւրահաղորդ բնաւորութեան՝ նա հետզհետէ լայն համակրանք է ձեռք բերում մտաւորական շրջաններում եւ զբաւում կարեւոր հասարակական գիրքեր - մամուլի աշխատակից, հոգաբարձու, զանազան միութիւնների անդամ, քաղաքական գործերի պաշտպան: Մասնաւորապէս հմուտ էր Դաշնակցութեան վերաբերեող դատական գործերին եւ այդ նպատակով յաճախ ճամբորդութիւններ էր կատարում դէպի դաւառական կենտրոնները՝ Երեւան, Գանձակ, Շուշի եւայլն: Նա առանձնապէս աչքի ընկնող դեր կատարեց Հ. Յ. Դաշնակցութեան խոշոր դատավարութեան ժամանակ, 1912 թ., Խ. Կարճիկեանի եւ ուրիշների հետ ձեռնհասութեամբ նախապատրաստելով դատական նիւթը եւ յարաբերութիւն պահելով ուսն նշանաւոր փաստաբանների հետ:

Քաղաքական դաւանանքով Գ. Խատիսեանը դաշնակցական էր: 1912 թ. իրրեւ Դաշնակցութեան թեկնածու, նա ընտրեց Թիֆլիսի քաղաքային Դումայի անդամ: Իրրեւ առեւտրական իրաւունքի հմուտ մասնագէտ, 1914 թ. նշանակեց Թիֆլիսի Բորսայի քարտուղար: Մասնակցում էր զէմստւոյական աշխատանքներին եւ Կովկասի ազգադրական, վարչական ու տնտեսական գործերի սակաւաթիւ մասնագէտներից մէկն էր:

Զուտ հայ իրականութեան մէջ, հասարակական գործերում Գիւղան երեւան էր գալիս իրրեւ Դաշնակցութեան ներկայացուցիչ: Ուրպէս այդպիսին, նա գործում էր մի շարք կրթական - մշակութային հիմնարկութիւնների մէջ, Ազգային Բիւրօյում եւ ապա Ազգ. Խորհրդում: Մինչեւ թերթի պաշտօնապէս Դաշնակցութեան ձեռքը անցնելը, նա անդամ էր «Հորիզոն»-ի հրատարակչական եւ խմբագրական մարմինների: Նա՛ էր, որ Աւ. Սահակեանի, Յ. Փիւրայեանի, Ս. Կամսարականի ու Աւ. Շահխաթունեանի հետ մշակեց Կովկասի զէմստւոյի հայկական նախագիծը, ինչպէս եւ, աւելի ուշ, Կովկասի վարչական վերաբաժանման ծրագիրը: Նա՛ էր, որ շնորհիւ իր ունեցած կապերի եւ ծանօթութիւնների մայրաքաղաքում, նպաստեց, որ ժամանակաւոր կառավարութիւնը իւրացնէ հայկական տեսակէտը Կովկասի ներքին սահմանների վերագծման խնդրում:

Երբ 1918 թ. ծնունդ առաւ Հայաստանի Հանրապետութիւնը եւ կառավարութեան կողմից պատւիրակութիւն ուղարկեց Պոլիս, Գիւղան նշանակեց պատւիրակութեան իրաւագէտ խորհրդական: Դրանից առաջ, հայ - վրացական արիւնքոտ բախման միջոցին, Թիֆլիսում, մասնակցում էր այն բոլոր աշխատանքներին, որոնց նպատակն

էր պաշտպանել հայ ժողովրդի եւ Հայաստանի ոտնահարած իրաւունքները: Ի միջի այլոց, Վ. Նաւասարդեանի հետ կազմեց ռուսերէն լեզուով մի գրքոյկ, որ պարզաբանում էր հայկական տեսակէտը հայ - վրացական բախման մասին:

1919-ին Գիգան տեղափոխուեց Երեւան, ուր ստանձնեց կառավարութեան գործերի վարիչի պաշտօնը եւ այդ պաշտօնից հեռացաւ, երբ նոյն տարւայ ամառը ընտրուեց Հայաստանի Խորհրդարանի անդամ: Խորհրդարանում նա ամենէն ձեռնհաս պատգամաւորներէից մէկն էր եւ յատկապէս լուրջ աշխատող յանձնաժողովներում: Շատ օրէնքներ նրա գրչի տակից են դուրս եկել: Ի միջի այլոց նրա կազմածն է 1919 թ. Մայիս 28-ի «Միացեալ եւ Անկախ Հայաստանի» յայտարարութիւնը, որ այնքա՛ն աղմուկի առիթ հանդիսացաւ իր ժամանակին:

Հայաստանի խորհրդայնացումից յետոյ, Գիգան չէզոքացեց գիտական - հասարակական գործունէութեան ասպարէզից եւ Երեւանի վարիչները չուղեցին օգտուել նրա բացառիկ պաշարից: Վրացիները աւելի լայնախոհ գտնուեցին. 1925 թ. նա նշանակուեց իրաւագիտութեան պրոֆէսոր Թիֆլիսի համալսարանում: Միաժամանակ ջրային իրաւունքի մասին դասախօսութիւններ էր կարդում բաղմարեստեան բարձրագոյն դպրոցում եւ ջրային վարչութեան իրաւագէտ - խորհրդականն էր: 1932 թ. տեղափոխուեց Մոսկւա: Նրա կեանքի եւ գործունէութեան այս շրջանի մասին, դժբախտաբար, ոչինչ չգիտենք: Վերջին տեղեկութիւնը Խարկովի մօտ երկաթուղային արկածի եւ մահուան լուրն է:

Գ. Խատիսեանի մահը ծանր կորուստ է Հայաստանի եւ հայ ժողովրդի համար, որոնց նա դեռ մեծ ծառայութիւններ կարող էր մատուցանել: Նրա գիտական լայն ու խոր հմտութիւնն ունեցող եւ հայրենիքին ներւած հանրային գործչի դէմքը անմոռանալի կը մնայ նրան ճանաչողներէ յիշողութեան մէջ: Նա չի մոռցի եւ իբրեւ մարդ ու ընկեր՝ իր հոգեկան ջերմութեամբ, իր համեստ, քաղցր ու կենսուրախ բնավորութեամբ, իր հաղորդակից ու արձագանգող հոգով: Ով ճանաչել է նրան, ապրել ու գործել է հետը յաւիտեան վառ կը պահէ իր հոգում նրա յիշատակը:

Գիգան ամուսնացած էր Յով. Թումանեանի անդրանիկ աղջկայ հետ: Նրա միակ որդին, որ այժմ 19 ամեայ պատանի է, ուսանում է Երեւանում: